

ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության ՓՔ վարչության ավագ փորձագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԸ

Հանցակազմը, որպես որոշակի տեսակի հանցագործությունների հասկացության գիտական վերացարկում, իր մեջ ընդգրկում է այդ հանցագործությունների առավել էական ու բնութագրական հատկանիշների համակցությունը¹: Հանցակազմի հիմնական նշանակությունն այն է, որ բավարար հիմք է ստեղծվում հավաստելու հանցագործության (կոնկրետ դեպքում հափշտակության) առկայության փաստը: Արարքը հանցագործություն է, եթե այն իր մեջ բովանդակում է հանցակազմի բոլոր տարրերն ու հատկանիշները: Անձի արարքում որոշակի հանցակազմի առկայության հավաստումը հիմք է հանդիսանում այդ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Հափշտակության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա հիմնական բնորոշումներն իրենց մեջ ընդգրկում են արարքի հետևյալ վեց հիմնական հատկանիշները՝

- 1) գույքի պատկանելիությունն ուրիշին,
- 2) գույքը վերցնելը և (կամ) հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելը,
- 3) ապօրինությունը,
- 4) անհատույց լինելը,
- 5) սեփականատիրոջը կամ գույքը տիրապետող այլ անձին վնաս պատճառելը և
- 6) շահադիտական նպատակը:

Հափշտակության օբյեկտիվ կողմը բնորոշող առաջին հատկանիշը համարվում է՝ «ուրիշի գույքը վերցնելը և (կամ) հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելը»: Ուրիշին պատկանող գույքը վերցնելը և (կամ) հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելն իրենից ներկայացնում է արարք, այն է՝ գործողություն: Արարքը միշտ հանդես է գալիս որպես որոշակի մարդու հանրորեն վտանգավոր կոնկրետ վարքագիծ, որն իրականացվում է որոշակի պայմաններում, տեղում և ժամանակահատվածում: Ընդ

որում, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հանցագործություն է համարում ոչ թե մարդու այնպիսի մտքերը կամ գաղափարները, որոնց իրականացումը կարող է վնաս պատճառել անձին, հասարակությանը և պետությանը, այլ միայն հանրորեն վտանգավոր այն արարքները (գործողությունը կամ անգործությունը), որոնք ոտնձգում են համապատասխան քրեաիրավական նորմերով պահպանվող հասարակական հարաբերությունների դեմ:

Իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում հափշտակությունների վերաբերյալ օգտագործվող տերմիններից առավել տարածվածը՝ «**ձեռք բերել**», «**յուրացնել**», «**տիրապետել**» (նաև՝ **զավթել**, **տիրանալ**, **սեփականել**²), «**վերցնել**» և «**դարձնել**» տերմիններն են: «**Ձեռք բերել**» և «**յուրացնել**» տերմինները բոլորովին չեն համապատասխանում հափշտակության հանցակազմի բնույթին: Դրանցից առաջինը, ըստ էության, իր մեջ ընդգրկում է գույքի ձեռքբերման այն փաստը, որն արդեն դուրս է բերվել պետական կամ հանրային ֆոնդերից, օրինակ՝ հափշտակված գույք գնելը և այլն, որը չափազանց ընդլայնում է «հափշտակություն» հասկացությունը: Իսկ երկրորդը փաստացի նախատեսում է հափշտակության միայն մասնավոր դեպքերը, դրա ձևերից միայն մեկը, որը չափազանց նեղացնում է վերջինիս սահմանները:

Ոչ այնքան հաջողված է համարվում «**տիրանալ**» տերմինը, որը նշանակում է՝ ա/ «**զավթել**», բ/ «**յուրացնել**», գ/ «**վերցնել խաբեությանը կամ ուժի գործադրմամբ**», դ/ «**ինչ-որ բան վերցնել լիարժեք տիրապետման ներքո**», ե/ «**դեպի իրենը գրավել, ինչ-որ բան իր ազդեցությանը ենթարկել**» և այլն: Նշված բնորոշումներից հետևում է, որ «**տիրանալ**» տերմինը չի ենթադրում համապատասխան ֆոնդերից գույքի մշտա-

www.lawinstitute.am

կան և պարտադիր դուրս բերում: Գրանց տիրապետումը հնարավոր է նաև որոշակի ժամանակահատվածով, որը հաճախ հանդիպում է ինքնիրավչության, պաշտոնեական դիրքի չարաշահման և այլ հանցակազմերում: Բացի դրանից, հափշտակություն հնարավոր է նաև այն դեպքերում, երբ հանցավորը գույքն անմիջականորեն չի տիրապետում, այլ փոխանցում է երրորդ անձանց:

Հափշտակությունն ամբողջությամբ չի բնորոշում նաև «վերցնել» տերմինը: Ընդհանուր առմամբ այն հասկացվում է ինչ-որ բանից «անջատում», «հեռացում»: Հափշտակությունների դեպքում իրապես տեղի է ունենում համապատասխան ֆոնդերից գույքի «անջատում», «հեռացում» կամ «վերցնելու» պրոցես: Սակայն դրանով հափշտակությունը չի ավարտվում: Այն պետք է վնաս պատճառի նաև նյութական բարիքների բաշխման հարաբերություններին: Օրինակի համար, «վերցնել» է համարվում նաև գույքի համապատասխան ֆոնդերից «անջատման» կամ «հեռացման» այն պրոցեսը, որը կատարվում է դրա ոչնչացման նպատակով և այլն: Հափշտակության բնորոշման մեջ միայն նշված տերմինի օգտագործումն էապես ընդլայնում է վերջինիս սահմանները:

Արարքն ամբողջությամբ չի բնորոշում նաև «դարձնել» տերմինը, որն, ըստ որոշ հեղինակների, իմաստային առումով համարժեք է «օգտագործել», «ինչ-որ բանով օգտվել» բառերին: «Դարձնել» տերմինն իր մեջ չի ներառում պետական կամ հանրային ֆոնդերից գույքի դուրս բերման պահը, չի մատնանշում հափշտակության առաջնային էտապը և չի նշում արտադրական հարաբերություններին վնաս պատճառելու փաստը: Այն միայն վկայում է արժեքներն առանձին անձանց օգտին դարձնելու, հափշտակության իրագործման և նյութական բարիքների բաշխման հարաբերություններին պատճառված վնասի մասին: Իրականում գույքից «օգտվելը», «օգտագործելը», առանձին անձանց «օգտին դարձնելը» հնարավոր է այն բանից հետո, երբ այն դուրս է բերվել պետական կամ հանրային ֆոնդերից: Օրինակ՝ հանցավորն իր օգտին է դարձնում հայտնաբերված կամ պատահաբար իր մոտ հայտնված նյութական արժեքը և այլն: Այդ իսկ պատճառով, հափշտակությունների

բնորոշման ժամանակ այդ տերմինի օգտագործումը կարող է առաջ բերել դիտարկվող հանցագործությունների լայնածավալ մեկնաբանման անհրաժեշտություն³:

Նշված տերմինների օգտագործմամբ հափշտակությունների բնորոշման նման անհաջող փորձերը բացատրվում են նրանով, որ դրանցից և ոչ մեկը (ինչպես նաև ցանկացած այլ տերմին), չի կարող տալ այդ բարդ երևույթի համապարփակ բնութագիրը, որն իր հերթին պայմանավորված է խախտվող հասարակական հարաբերությունների բարդությամբ: Այս հանգամանքի հետ կապված, իրավաբանական գրականության մեջ առաջարկվել է ընտրել հափշտակության օբյեկտիվ կողմը բնորոշող այնպիսի մի տերմին, որն իր մեջ կներառի «արտադրական և նյութական բարիքների բաշխման հարաբերությունների դեմ ուղղված արարքի» բնորոշումը: Սակայն վերևում նշված տերմիններից և ոչ մեկը չի բավարարում առաջարկվող պահանջներին, ուստի, դրա հետ կապված, անհրաժեշտություն է առաջանում միաժամանակ օգտագործել երկու տերմին, որոնք իրենց համակցության մեջ հափշտակությունը բնորոշում են ճիշտ իր բովանդակությանը համապատասխան:

Արարքի բնութագրման նպատակով, որը վնաս է պատճառում արտադրական հարաբերություններին, առավել ընդունելի է օգտագործել «վերցնել» տերմինը, քանի որ այն իրենից ներկայացնում է պետական կամ հանրային ֆոնդերից գույքը վերցնելու պրոցեսը, որն էլ համարվում է նաև հանրորեն վտանգավոր արարք: Դա պայմանավորված է նյութական բարիքների արտադրության հասարակական հարաբերությունների խախտման և սեփականությանը պատճառված վնասի փաստով: Գույքը վերցնելը համապատասխան ֆոնդերից իր մեջ ներառում է նաև հակաօրինական գործողություն, որն արգելված է քրեական օրենքով: Այն չպետք է պարտադիր համարել միայն հանցավորի համար: Այն կարող է իրականացվել նաև հանցավորից անմիջական ազդեցության ներքո գտնվող այլ անձի կողմից, օրինակ՝ անչափահասի կողմից:

Եթե հափշտակությունը ձևակերպենք որպես «գույքի հակաօրինական վերցնելը պետական կամ հանրային ֆոնդերից», ապա որպես այդպիսի հանցագործություն կարելի է ընդունել

գույքի ցանկացած վերցման փաստ: Դ-ա է պատճառը, որ նյութական բարիքների բաշխման հարաբերություններին վնաս պատճառող արարքի բնորոշման համար անհրաժեշտ է կիրառել մեկ այլ տերմին ևս, այն է՝ **«դարձներ»**: Այդ տերմինն ամբողջացնում և ընդգծում է այն հանգամանքը, որ վերցված գույքն օգտագործվում է ի շահ առանձին անձանց և առավել լայն կերպով է բնութագրում արարքը հափշտակության դեպքում: **«Վերցնել»** և **«դարձնել»** տերմիններն իրենց համակցության մեջ արարքը բնորոշում են ճիշտ իր բովանդակությանը համապատասխան: Դ-ա կարևորվում է նրանով, որ նշված տերմինները, մեկը մյուսին լրացնելով, նեղացնում են իրենց իմաստային նշանակությունը հափշտակության շրջանակներում: Այսպես, օրինակ, «պետական կամ հանրային ֆոնդերից գույքը հակաօրինական վերցնելը» կարող է հանդես գալ ոչ միայն հափշտակությունների դեպքում: Սակայն, երբ խոսքը վերաբերում է ինչ-որ մեկի օգտին գույքը վերցնելուն, ապա այն սահմանափակում է հասկացության բովանդակությունը, քանի որ այդ դեպքում գույքը վերցնելու ոչ բոլոր դեպքերն են, որ բնորոշ են հափշտակություններին, այլ միայն նրանք, որոնք ուղեկցվում են նյութական արժեքներն առանձին անձանց օգտին դարձնելու փաստով⁴, այլ կերպ ասած՝ «Անձին հափշտակություն կատարելու մեջ հնարավոր է մեղադրել միայն այն դեպքում, եթե նա գույքը վերցրել է իր կամ այլ անձանց օգտին դարձնելու նպատակով»⁵: Հանդիպում են նաև դեպքեր, երբ հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմը նկարագրելիս, հատկապես հափշտակության բնորոշման մեջ, արտահայտվում են այլ տերմիններ, մասնավորապես՝ **«վերցնելը»** և **«բռնագավթելը»**, **«վերցնելը»** և **«սեփականությունը դարձնելը»**, **«դուրս բերումը»** և **«դարձնելը»** և այլն, որոնք բոլորն էլ բնորոշում են հափշտակության օբյեկտիվ կողմը⁶:

Իրավաբանական գրականության մեջ խիստ քննադատության է ենթարկվել նաև հափշտակությունների բնորոշման մեջ տեղ գտած՝ **«հանցավորի կամ այլ անձանց օգտին»** ձևակերպումը և պատճառաբանվել նրանով, որ նշված բառերը նախ և առաջ չեն սահմանազատում ուրիշից հափշտակված կամ ժամանակավորապես փոխառված գույքի տարբերությունը, քանի որ

վերջինիս դեպքում այն նույնպես անցնում է **«հանցավորի կամ այլ անձանց օգտին»**: Բացի այդ, «այլ անձանց» բառերը համարվում են ավելորդ և անիմաստ, քանի որ հափշտակության դեպքում միևնույն է, թե ով կստանա «օգուտ»՝ անձը, որն անմիջապես հափշտակել է ուրիշի գույքը, թե՛ այլ անձինք⁷: Հարկ է նկատել, որ նշված տեսակետը գուրկ չէ բավարար հիմքերից և խնդրո առարկայի կարևորությունից ելնելով, արժանի է առանձնակի ուշադրության: Ուրիշի գույքը հանցավորի կամ այլ անձի օգտին դարձնելը, եթե դրան չի գուգորդում գույքի բռնագավթում, ապա տեղի է ունենում գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետող այլ անձի կողմից գույքի կամավոր փոխանցում հանցավորի կամ այլ անձանց տիրապետմանը: Այսինքն՝ սեփականատիրոջից կամ գույքը տիրապետող այլ անձից գույքի փոխանցումը հանցավորին կատարվում է կամավոր, ընդ որում, **խարդախության դեպքում**՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով, իսկ **յուրացման կամ վատնման դեպքում**՝ սեփականատիրոջ կամ գույքը տիրապետող այլ անձանց և հանցանք կատարած անձի միջև գոյություն ունեցող իրավահարաբերությունների ուժով:

Քրեական օրենսդրությունը, կախված հանցագործության կատարման եղանակից, հատուկ տարբերակելով հափշտակությունների վերաբերյալ նախատեսվող պատասխանատվության տեսակները, առանձին հողվածներով առանձնացնում և ամրագրում է հափշտակության հետևյալ ձևերը՝

- 1) գողություն,
- 2) խարդախություն,
- 3) յուրացում կամ վատնում,
- 4) կողոպուտ,
- 5) ավագակություն և այլն:

Սեփականության դեմ ուղղված նշված ոտնձգությունները միմյանցից էապես տարբերվում են իրենց կատարման եղանակով: Բացառություն են կազմում միայն «Պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր հափշտակելու» (ՀՀ քր. օր-ի 180 հոդված) և «Հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ» (ՀՀ քր. օր-ի 181 հոդված) հանցակազմերը: Նշված

հանցակազմերի դիսպոզիցիան որևէ կերպ չի պարզաբանում, թե նշված արարքների կատարումը հափշտակության կոնկրետ որ ձևով է ենթակա կատարման, այսինքն՝ կարելի է մեկնաբանել որպես գույքի հափշտակություն՝ **«անկախ հափշտակության կատարման եղանակից»**: Սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, որ գույքի հափշտակությունը կարող է կատարվել ցանկացած այնպիսի մի եղանակով, որը բացարձակ հայտնի չէ քրեական օրենսդրությանը:

Վ. Ն. Կուդրյավցևը, ելնելով հանցակազմերի միջև գոյություն ունեցող սահմանազատող հատկանիշների քանակից, առանձնացնում է երեք հիմնական դեպքեր.

- 1) երբ հանցակազմերի միջև ընդհանուր հատկանիշները, բացի տարիքից և մեղսունակությունից, բացակայում են,
- 2) երբ հանցակազմերն ունեն քիչ քանակությամբ ընդհանուր հատկանիշներ:

Նման հարաբերակցության մեջ են գտնվում, օրինակ՝ գողության (հոդված 177) և երեխայի առքուվաճառքի (հոդված 168) կամ մարդուն առևանգելու (հոդված 131) հանցակազմերը: Նշված հանցագործությունների օբյեկտները տարբեր են՝ մի դեպքում հանդես է գալիս **սեփականությունը**, իսկ մեկ այլ դեպքում՝ **ընտանիքի և երեխայի շահերն ու անձի ազատությունը**: Հիմնականում տարբերվում են նաև սուբյեկտները (ըստ տարիքի): Մասամբ համընկնում են միայն գործողությունների եղանակը՝ «հափշտակությունը» և «առքուվաճառքը» կամ «առևանգելը», ինչպես նաև մեղքի ձևը՝ դիտավորությամբ կատարելը: Սակայն մնացած հատկանիշները տարբերվում են ըստ ոտնձգության առարկայի և սուբյեկտիվ կողմի: Նման պարագայում հանցակազմերի սահմանազատումը միմյանցից դժվարություն չի ներկայացնում և այն կարող է իրականացվել մի շարք հատկանիշների միջոցով: Բացի այդ, նշված հանցակազմերի մեծ մասն ունեն տարբեր կառուցվածքներ,

- 3) երբ հանցակազմերն ունեն բոլոր ընդհանուր հատկանիշները, բացի մեկից:

Տվյալ դեպքում միայն այդ հատկանիշն ունի սահմանազատող նշանակություն: Այդպիսի հանցագործությունները կարելի է բառի իսկական իմաստով անվանել **«հարակից»**, քանզի վերջիններիս կառուցվածքը սովորաբար լինում է

միանման: Այսպես օրինակ՝ գողությունը տարբերվում է կողոպուտից միայն գործողության եղանակով, իսկ կողոպուտի հասարակ տեսակը կողոպուտի որակյալ տեսակից՝ մեկ համարժեք հատկանիշով և այլն⁸:

Օբյեկտիվ կողմի վերջնական սահմանազատման համար Վ. Ն. Կուդրյավցևն առաջարկում է երեք հիմնական հարցերի պարզաբանում՝ ա/ եղե՞լ է արդյոք գույքի հափշտակում պաշտոնեական դիրքն օգտագործելու միջոցով կամ առանց դրա, բ/ եթե ոչ, ապա այն գաղտնի՞ է կատարվել, թե՞ բացահայտ, գ/ եթե կատարվել է բացահայտ, ապա բռնություն գործադրվե՞լ է, թե՞ ոչ, եթե գործադրվել է, ապա ինչպիսի՞, թե՞ կատարվել է առանց բռնություն գործադրելու: Պատկերացնենք, որ գույքի հափշտակումն իրականացվել է առանց պաշտոնեական դիրքն օգտագործելու և գաղտնի: Հետևաբար արարքը ենթակա է որակման որպես գողություն⁹:

Հափշտակության օբյեկտիվ կողմին վերաբերող երկրորդ հատկանիշը հանդիսանում է ուրիշի գույքն **անօրինական վերցնելը և (կամ) իր կամ այլ անձանց օգտին դարձնելը**: **«Անօրինականությունը»** կամ այսպես կոչված **«հակաօրինականությունը»**, հանդիսանում է հանրորեն վտանգավոր արարքի կարևոր սոցիալական հատկանիշը, որովհետև ինչքան էլ վտանգավոր լինի արարքը, այն չի կարող հանցագործություն համարվել, եթե նախատեսված չէ քրեական օրենքով:

Երբեմն իրավաբանական գրականության մեջ վստահված գույքի յուրացումը նշանակում է՝ **«օրինական տիրապետումից անցումը հակաօրինականի»**, որը երբեմն **անվանում են նաև գույքի «ֆորմալ բռնագրավում»**¹⁰: Անձը գույքը հափշտակելով, դրա նկատմամբ «հաստատում է գերիշխանություն»: Այդ իսկ պատճառով նա գույքը տնօրինում, տիրապետում և օգտագործում է ի սեփականություն, սակայն այն տարբերությամբ, որ գույքը հափշտակող անձն իրավաբանորեն չի հանդիսանում դրա սեփականատերը, քանի որ հնարավոր չէ սեփականության իրավունքի ձեռքբերումը հանցավոր ճանապարհով: Անկախ ամեն ինչից, տուժողը չի կորցնում իրենից հափշտակված գույքի նկատմամբ իր ունեցած սեփականության իրավունքը: Դա է պատճառը, որ իրավաբանական գրականության

մեջ հափշտակության վերաբերյալ տրվող բնորոշումների մեջ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված ուրիշի գույքը չի բնութագրվում իբրև հանցավորի սեփականություն, այլ բնութագրվում է որպես՝ «**ուրիշի գույքը հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելը**»։ Միևնույն ժամանակ, նշվածը բոլորովին էլ չի նշանակում, որ հափշտակություն պետք է համարել ուրիշի գույքը շահադիտական նպատակներով ժամանակավորապես օգտագործումը։ Այդ դեպքում արարքը պետք է որակվի խաբեության կամ վատահույունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու (ՀՀ քր. օր-ի 184 հոդված) կամ ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին առանց հափշտակելու նպատակի ապօրինաբար տիրանալու (ՀՀ քր. օր-ի 183 հոդված) համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածներով¹¹։

Հափշտակության օբյեկտիվ կողմին վերաբերող երրորդ հատկանիշը ուրիշի գույքն **անհատույց վերցնելն է**։ Այն բնութագրվում է ուրիշին պատկանող գույքը հանցավորի կամ այլ անձանց օգտին վերցնելու կամ դարձնելու մեջ՝ առանց դրա համարժեքը փոխհատուցելու (մեղադրյալի մոտ բացակայում է պատճառված վնասը հետագայում հատուցելու մտադրությունը)։

Եթե գույքը տիրանալու պրոցեսում սեփականատիրոջը տրամադրվում է համապատասխան փոխհատուցում, ապա այդպիսի գործողությունը չպետք է դիտել որպես հափշտակություն, քանի որ այդ գործողությունները գույքային վնաս չեն պատճառում (այսինքն՝ տեղի չի ունենում գույքային ֆոնդերի նվազում)։ Իսկ վերցված գույքի մասնակի փոխհատուցման դեպքում չի նշանակում, որ հափշտակության հանցակազմը բացակայում է։ Այն կարող է հաշվի առնվել միայն հափշտակության որոշակի չափի առկայության դեպքում։ Իսկ այն հարցի պարզումը, թե փոխհատուցումը համարժեք է եղել, թե՛ ոչ, որոշում է դատարանը՝ հիմնվելով գործի կոնկրետ հանգամանքների վրա՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև տուժողի կարծիքը։

Հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմի վերջին չորրորդ հատկանիշը հանրորեն վտանգավոր հետևանքն է՝ **սեփականատիրոջը կամ գույքը տիրապետող այլ անձին պատ-**

ճառված վնասը։ Վնաս պատճառելու տակ հասկացվում է այն նյութական վնասը, արտահայտված գույքի ընդհանուր արժեքի չափով, որը վերցվել (կամ դարձվել) է հանցավորի կամ այլ անձանց օգտին։ Պատճառված վնասի մեջ չեն ընդգրկվում տվյալ գույքի օգտագործման արդյունքում բաց թողնված օգուտները։

Սակայն հափշտակության հետ կապված գործերով հանցագործությունները որակելու ընթացքում «**սեփականատիրոջը կամ գույքը տիրապետող այլ անձին պատճառված վնաս**» հասկացությունը չպետք է նույնացնել ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու ընթացքում պատճառված վնասի հետ։ Ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու ընթացքում հանցավորը շահադիտական նպատակ չի հետապնդում։ Եթե ոչնչացված կամ վնասված գույքը հանդիսացել է հափշտակության բաղկացուցիչ մաս, ապա արարքը ՀՀ քր. օր-ի 185 հոդվածով որակելը ճիշտ չէ։ Այն դեպքում, երբ հափշտակություն կատարելիս գույքը զգալի չափով վնասվում է՝ արգելքները հաղթահարելու նպատակով (օրինակ՝ շինության մուտքի դուռը կոտրելը, որտեղ պահվում են նյութական արժեքները և այլն), ապա տվյալ դեպքում գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմը ստանում է ինքնուրույն քրեաիրավական նշանակություն։ Եթե գույքի ոչնչացումը կամ վնասումը թեկուզև կապված է հափշտակության հետ, սակայն ձևավորում է ինքնուրույն հանցակազմ, ապա կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ (օրինակ՝ պահեստից կատարված հափշտակության հետքերը թաքցնելու նպատակով կատարվում է պահեստի հրկիզում, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր-ի 177 հոդվածի և 185 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով)։

Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը կարող է հանդես գալ նաև այնպիսի հանցագործությունների հետևանք, ինչպիսիք են՝ ահաբեկչությունը (ՀՀ քր. օր-ի 217 հոդված), օդանավ, նավ կամ երկաթուղային շարժակազմ փախցնելը կամ զավթելը (ՀՀ քր. օր-ի 221 հոդված), զանգվածային անկարգությունները (ՀՀ քր. օր-ի 225 հոդված), խուլիգանությունը (ՀՀ քր. օր-ի 258 հոդված), վանդալիզմը (ՀՀ քր. օր-ի 260 հոդված), դիվերսիան (ՀՀ քր. օր-ի 303 հոդված) և այլն։

ՀՀ քր. օր-ի 185 հոդվածի հատկանիշներ-

րով արարքը ենթակա է որակման միայն այն դեպքերում, երբ ոչնչացվող կամ վնասվող առարկաները չեն գտնվում քրեաիրավական հատուկ նորմերի պաշտպանության ներքո և իրենց մեջ չեն պարունակում առավել ծանր հանցագործության հատկանիշներ: Օրինակ՝ հանցավորը, հրկիզելով շինությունը, կարող է նաև չնախատեսել, որ նրա ներսում մարդ է գտնվում, կամ հրշեջները հրդեհը մարելու ժամանակ կարող են ստանալ ուժեղ այրվածքներ: Սակայն նկատի ունենալով հրդեհի ուժգնությունը, հանցավորն ունի բոլոր հնարավորությունները նախատեսելու իր կատարած գործողությունների հնարավոր հետևանքները:

Հրկիզումն իրականացնողի մեղավորությունն այնպիսի հետևանքների նկատմամբ, ինչպիսիք են մարդկային զոհերը, կարող է արտահայտվել նաև հանցավոր ինքնավստահությամբ, քանի որ հանցավորը թեկուզև նախատեսում է այդպիսի հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի, ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն: Նման դեպքերում հանցավորի գործողություններն ամբողջությամբ ընդգրկվում են գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմի ծանրացուցիչ հանգամանքներում և արարքը լրացուցիչ որակելու կարիք չունի:

Եթե գույքի դիտավորյալ ոչնչացումը կամ վնասումը կատարվում են խուլիզանական դրդումներով, ապա ՀՀ քր. օր-ի 185 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքների բացակայության դեպքում արարքը որակվում է որպես խուլիզանություն: Այն դեպքում, երբ ուրիշի գույքի ոչնչացումը կամ վնասումը կատարվել է խուլիզանական դրդումներով և գույքը գտնվել է այնպիսի հանգամանքներով, որոնք նախատեսված են ՀՀ քր. օր-ի 185 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով (հրկիզման, պայթեցման կամ հանրավտանգ այլ եղանակով, խոշոր չափերով, առանձնապես խոշոր չափերով, անզուրուքությամբ առաջացրել է մարդու մահ կամ պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում), ապա պատասխանատվությունը պետք է վրա հասնի հանցագործությունների համակցությամբ: Այս

դեպքում խնդիրը վերաբերում է գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու այնպիսի շարժառիթներին, որոնք կատարված արարքին հաղորդում են հանցագործության բնույթ՝ ուղղված երկու տարբեր օբյեկտների դեմ՝ սեփականության և հասարակական կարգի դեմ:

Իրավաբանական գրականության մեջ տարակուսանք է առաջացրել նաև այն ձևակերպումը, որի հիմքում ընկած է **«գույքը տիրապետող այլ անձ»** հասկացությունը: Այլ անձը (ոչ սեփականատերը) ուրիշի գույքը կարող է տիրապետել ոչ միայն օրինական, այլև անօրինական ձևով: Այնուհայտ է, որ քրեական օրենքը պետք է պաշտպանության տակ առնի այն անձանց շահերը, որոնք ուրիշի գույքը տիրապետում են օրինական հիմքերով: Սակայն պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հափշտակված գույքի **«հափշտակումը»** սեփականատիրոջը վնաս չի պատճառում, այլ «վնաս» է պատճառում այն անձին, ով հափշտակել է գույքը դրա իրական սեփականատիրոջից, ով իրականում վնաս է պատճառել սեփականատիրոջը և ով դրանով իսկ անօրինական տիրապետում է ուրիշի գույքը: Որոշ հեղինակների կարծիքով, այդ պրակտիկան ենթակա է վերանայման և հափշտակության բնորոշման մեջ «գույքը տիրապետող այլ անձ» ձևակերպումը պետք է փոխարինել «գույքի այլ օրինական տիրապետող» ձևակերպմամբ (այսինքն՝ այն անձը, որն ուրիշի գույքը տիրապետում է օրինական հիմքերով): Նաև առաջարկվել է, որ նախկինում հափշտակված գույքի **«հափշտակումը»** նախատեսվի առանձին հանցակազմի տեսքով (առանձին հոդվածով), սակայն ոչ թե հափշտակության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներում, այլ՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ առանձին հոդվածի տեսքով: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ օրինակ՝ ՌԴ-ի նոր քրեական օրենսգրքի առաջարկվող բոլոր նախագծերում տվյալ հանցակազմի համար նախատեսվում էր համապատասխան հոդված, որը, սակայն, օրենսդրի կողմից չընդունվեց և դրա փոխարեն առաջարկվեց պատասխանատվություն նախատեսել **«Այնուհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելու կամ իրացնելու»** համար (ՀՀ քր. օր-ի 216 հոդված): Սակայն այստեղ կասկած է հարուցում

այն փաստը, որ վերը նշված հանցակազմը նախատեսված է «Տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում: Պետք է նկատի ունենալ, որ ակնհայտ հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերելու հանցակազմը որևէ կերպ կապված չէ տնտեսության իրավաչափ գործունեության հետ և այն առավել մոտ է հափշտակությանը: Ուստի առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի նշված հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը ընդգրկվեր «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում¹²:

Ըստ հանցակազմի (օբյեկտիվ կողմի) օրենսդրական նկարագրության եղանակի առանձնահատկության, հանցակազմերը լինում են՝

- 1) նյութական,
- 2) ձևական,
- 3) հատված:

Նյութական են համարվում այն հանցակազմերը, որոնցում վտանգավոր հետևանքները նկարագրվում են (կամ դրանց առկայությունը ենթադրվում է) որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ: Նման դեպքերում օրենքում նկարագրված վտանգավոր հետևանքների առաջացումը պարտադիր է հանցագործությունն ավարտված ճանաչելու համար: Հակառակ դեպքում (եթե հետևանքները չեն առաջանում) արարքը որակվում է որպես **հանցափորձ**: Ուրիշի գույքի հափշտակության դեպքում, որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, նյութական հանցակազմի մեջ ընդգրկվում են **հանրորեն վտանգավոր հետևանքները**: Հափշտակությունների դեպքում հանցագործության արդյունքն արտահայտվում է սեփականատիրոջը ռեալ նյութական վնաս պատճառելու մեջ, որի չափը որոշվում է հափշտակված գույքի արժեքով: Որքան մեծ է հափշտակված գույքի արժեքը, արտահայտված դրամական գումարով, այնքան ավելի մեծ նյութական վնաս է պատճառվում սեփականատիրոջը և այդքան անգամ ավելի մեծ է հափշտակության չափը: Մի շարք հանցակազմերում (օրինակ՝ գողություն, կողոպուտ, յուրացում, վատնում և այլն) պատճառված վնասի չափը դիտվում է որպես հանցագործությունը **որակյալ** («գույքի հափշտակությունը զգալի չափերով») և **առանձնապես որակյալ** («խոշոր չափերով») և **առանձնապես խոշոր չափերով**) դարձնող հատկանիշ: Ընդ որում անհրաժեշտ է, որպեսզի հանրորեն վտանգավոր արարքը կատարող անձի ակտիվ գործողությունների և դրա հետևանքների միջև առկա լինի **անհրաժեշտ պատճառական կապ**: Հափշտակությունը համարվում է ավարտված հանցագործություն սկսած այն պահից, երբ հանցավորը, փաստացի տիրանալով գույքին, ռեալ հնարավորություն է ստանում այն տնօրինելու և, որպես իր սեփականությունը հանդիսացող գույքի, իր հայեցողությամբ օգտագործելու: Սուբյեկտի մոտ հափշտակված գույքն օգտագործելու և տնօրինելու ռեալ հնարավորության բացակայության դեպքում բացակայում է նաև հափշտակության ավարտված հանցակազմի առկայությունը: Տվյալ դեպքում հանցավորի արարքը ենթակա է որակման՝ որպես ուրիշի գույքի հափշտակության հանցափորձ:

Հանցագործությամբ պատճառված վնասը կարող է լինել երկու տեսակի՝ բարոյական և նյութական: Հափշտակության դեպքում ակնհայտ է, որ հետևանքը հանդիսանում է նյութական վնասը: Տեսության մեջ և պրակտիկայում «նյութական վնաս» ասվածը հասկացվում է միայն իրական պատճառված վնասը, որն ի տարբերություն տվյալ գույքի նկատմամբ բաց թողնված օգուտների, որոշվում է հափշտակված գույքի արժեքով:

Կախված այն հանգամանքից, որ հափշտակությունը պարունակում է նյութական հանցակազմ և ավարտված է համարվում հանրորեն վտանգավոր հետևանքները վրա հասնելու պահից, ուստի հափշտակությունների քրեաիրավական որակման համար կարևոր է ավարտված հանցագործության (կոնկրետ դեպքում՝ հափշտակության) տարբերումը չավարտված հանցագործությունից: ՀՀ քր. օր-ի 33-րդ հոդվածը սահմանում է ավարտված և չավարտված հանցագործությունների հասկացությունը: Ըստ նշված հոդվածի՝ «Ավարտված հանցագործություն է համարվում այն արարքը, որը պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Չավարտված հանցագործություններ են համարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցա-

գործությունների նախապատրաստությունը:

Հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար պատասխանատվությունը վրա է հասնում սույն քր. օր-ի Հատուկ մասի նույն հոդվածով, ինչ ավարտված հանցագործության համար՝ հղում կատարելով օրենսգրքի 34 կամ 35 հոդվածներին»:

Հափշտակության հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը, որն անմիջականորեն ուղղված է հափշտակություն կատարելուն, եթե հափշտակությունն ավարտին չի հասել անձի կամքից անկախ հանգամանքներով (ՀՀ քր. օր-ի

34 հոդված):

Հափշտակության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հափշտակություն կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հափշտակությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով (ՀՀ քր. օր-ի 35 հոդված):

Բացառություն է կազմում միայն ավագակության հանցակազմը, որը ավարտված է համարվում ուրիշի գույքը հափշտակելուն ուղղված հարձակումը կատարելու պահից:

¹ Տե՛ս Գրիգորյան Մ. Վ. «Հանցագործության ուսմունքը քրեական իրավունքում», Երևան, 2001թ., էջ 51:

² Տե՛ս «Ռուս-հայերեն բառարան» /մեկ հատորով/, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ս. Ղարիբյան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1977թ., էջ 255:

³ Տե՛ս Пинаев А. А. «Уголовно-правовая борьба с хищениями». Харьков, 1975. С. 85-87.

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 88-90:

⁵ Տե՛ս Бюллетень Верховного суда СССР. 1965. N3. С. 24-25.

⁶ Տե՛ս «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации». Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики. Экзамен. М., 2002. С. 308.

⁷ Տե՛ս Кочой С. М. «Ответственность за корыстные преступления против собственности». Учебно-практическое пособие, издание 2-е, дополненное и переработанное. М., 2000. С. 105.

⁸ Տե՛ս Кудрявцев В. Н. «Общая теория квалификации преступлений». Юридическая литература. М., 1972. С. 147-148.

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 166-168:

¹⁰ Տե՛ս «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации». Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики. Экзамен. М., 2002. С. 308.

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 308:

¹² Տե՛ս Кочой С. М. «Ответственность за корыстные преступления против собственности». Учебно-практическое пособие, издание 2-е, дополненное и переработанное. М., 2000. С. 106-107.